# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

*<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ*

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 66-րդ հոդվածով , 87-րդ հոդվածի 1-ին կետով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի ,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասինե թիվ 1918-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն, 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշումները, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված ,Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովիե 2019 թվականի հունվարի 14-ի թիվ 1 դրական եզրակացություն անհրաժեշտ է՝

1. Շաղատ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողեր նպատակային նշանակության այլ հողատեսքերից 0.0096հա (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0132) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակության :
2. 0.0096հա հողամասը արդյունաբերության, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելուց և հողամասի վրա ինքնակամ կառուցված 96քմ շինությունը օրինական ճանաչելուց հետո, ուղղակի վաճառքի միջոցով 98304 (իննսուն ութ հազար երեք հարյուր չոր) ՀՀ դրամ արժեքով (հողամասի արժեք՝ 96x144=13824 ՀՀ դրամ, շինության արժեք՝ 96x20000x0,044=84480 ՀՀ դրամ) կադաստրային արժեքով օտարել << ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ>> ՍՊԸ -ին:

Հողամասում առկա է << ԳԱԽ>> ՍՊԸ-ի կողմից ինքնակամ կառուցվել է ՀԷԿ-ի շենք: Սիսիանի համայնքի ղեկավարի 2018 թվականի հուլիսի 10-ի << Գոռ Բաբայանին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ>> թիվ 484-Ա որոշմաբ կառուցված ինքնակամ շինության համար <<ԳԱԽ>> ՍՊԸ-ի տնօրեն Գոռ Սիմոնի Բաբայանը ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ինքնակամ շինությունը օրինականացնելու, շինության սպասարկման հողամասը օտարելու համար, ինչպես նաև համայնքում առկա հողօգտագործումները կարգավորելու նպատակով անհրաժեշտ է Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսակ նշանակության հողեր նպատակային նշանակության 0.0096հա այլ հողերից (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0132) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ և հողամասը ու հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունը ուղղակի վաճառքի միջոցով օտարել << ՖԻՐՄԱ Գ.Ա.Խ>> ՍՊԸ-ին :

Քաղաքաշինության և տնտեսության

ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՂԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի համայնքի Շաղատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողեր նպատակային նշանակության 0.0096հա այլ հողերից (կադաստրային ծածկագիր՝ 09-069-0132) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակությամբ փոխադրելու և հողամասն ու հողամասի վրա ինքնակամ շինությունը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Սիսիանի համայնքի բյուջեում նախատեսվում եկամուտների ավելացում:

Քաղաքաշինության և տնտեսության
ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. Հովհաննիսյան